ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն 55(1), 2021 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 330.322.01

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գ. Գ. ՂԱՄԲԱՐՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Մեծ է ներդրումների դերը երկրների տնտեսական զարգացման գործընթացում: Այդ իսկ պատճառով, պատահական չէ, որ ներդրումների ներգրավման հիմնախնդիրը պետության մտահոգության առարկա է: Հոդվածը նվիրված է ՀՀ ներդրումների առանձնահատկությունների, խոչընդոտող գործոնների և, առավելապես, ներդրումների և ներդրումային դաշտի բարելավման գործընթացների կյանքի չկոչվելու նախապատճառների պարզաբանմանը:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.1.068

***Keywords*:** investment, foreign direct investment, investment environment, investment risks, economic development.

Խնդրի դրվածքը: Տնտեսական զարգացման գործընթացում ներդրումներն անհրաժեշտ նախադրյալ են, և նույնքան կարևոր բոլոր երկրների համար՝ անկախ նրանց զարգացման մակարդակից: Սակայն, եթե զարգացած երկրներում տնտեսական զարգացման գործընթացում ներդրումներն առանձնանում են տեղական և օտարերկրյա ներդրումների հավասազորությամբ, շատ դեպքերում տեղական ներդրումների էական գերազանցությամբ, և տնտեսական զարգացման կախվածությունն օտարերկրա ներդրումներից ճակատագրական չէ, ապա զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում, տնտեսական զարգացումը, տեղական ներդրումների սահմանափակ հնարավորությունների պայմաններում, մեծապես կախված է օտարերկրյա ներդրումներից և, կարելի է ասել, ուղղակիորեն արդունք է վերջիններից: Թեպետ, ինչպես վկայում են վիճակագրական ուսումնասիրությունները, ՀՀ տեղական ներդրումների հնարավորությունները շատ ավելի են, քան փաստացիորեն իրականացվում է: Խոշոր ներդրումների հնարավորություն ունեցող ՀՀ հարուստ բնակչությունը, (ՀՀ բնակչության 10%-ը տիրապետում է երկրի ողջ եկամտի 29,2%-ին, իսկ 20%-ը՝ 43%-ին (2018) [1]), իր եկամուտների զգալի մասը վերածում է խնայողությունների կամ ներդրումներ անում ՀՀ սահմաններից դուրս՝ չներդնելով սեփական երկրի տնտեսության զարգացման գործընթացի մեջ, ինչը խոսում է ներդրումային միջավայրի բարելավման և ներդրումային ռիսկերի արդյունավետ կառավարման անհրաժեշտության մասին:

Հայաստանը սփյուռք ունեցող երկիր է, և սովորաբար, ներդրումների

* E-mail: Ghambaryan.gg@mail.ru

տեսանկյունից, սփյուռք ունեցող երկրներն ունեն անվերապահ առավելություններ: Սակայն, նույնիսկ դրանով հանդերձ, արտաքին ներդրումների ծավալները ներկա իրականությունում տարեցտարի նվազում են:

Գնահատելով ստեղծած իրավիճակը և գիտակցելով հարցի կարևորությունը՝ հոդվածում խնդիր է դրվել քննարկել ոչ թե տնտեսական ակտիվության, տնտեսական աճի և ներդրումների վրա ազդող առանցքային գործոններն՝ ընդհանրապես և ՀՀ-ում, որոնք մասնագիտական և նույնիսկ բնակչության լայն շրջանակներին բավականին հայտնի են, միջազգային և տեղական հարթակներում մանրակրկիտ քննարկած ու պարզաբանված, այլ այն, թե ինչու քաջատեղյակ լինելով այդ սկզբունքային, առանցքային գործոններին, դրանք այնուամենայնիվ կյանքի չեն կոչվում և չեն իրականանում: Հոդվածի շրջանակներում պարզաբանվելու են ներդրումային հիմնախնդիրների նախապատճառները, որոնք խոչընդոտում կամ դժվարացնում են բարեփոխումների իրականացմանը:

Հետազոտության մեթոդիկան: ՀՀ տնտեսությունը մինչ 2008 թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն ունեցել է ակնառու աճ և պայմանավորված է եղել արտերկրից մասնավոր դրամական փոխանցումների և օտարերկրյա ներդրումների զգալի ծավալներով: 2008 թ.-ին, միջազգային ֆինանսական ճգնաժամի հետևանքով, կտրուկ կրճատվել են ՀՀ տնտեսական աճին նպաստող այս երկու արտաքին ազդակների ծավալները, որի արդյունքում Հայաստանի տնտեսությունն աննախադեպ անկում է ապրել: Ճգնաժամին հաջորդող տասնամյակում տնտեսական աճի բարձր ցուցանիշներ, ինչպիսին մինչ ճգնաժամն էր, այլևս չեն գրանցվել, իսկ ներդրումները շարունակաբար նվազել են: Այդ մասին են վկայում ստորև ներկայացվող նկ. 1, 2 և 3:

Ներկայիս առաջանցիկ համաշխարհային տնտեսության մեջ բարեկեցության կայուն մակարդակ ապահովելու համար, ինչպես նորվեգացի հայտնի տնտեսագետ Է. Ռայներտն է բնորոշում Ալիսան հրաշքների աշխարհում ստեղծագործության հերոսներից մեկի խոսքերով. «Ստիպված ենք վազել ամբողջ ուժով՝ միայն նույն տեղում մնալու համար» [5]: Էլ ի՞նչ խոսք դանդաղ տեմպերի հետևանքների մասին, այն էլ աշխարհաքաղաքական տարբեր շահերի բախման տարածաշրջանում, գոյության և անվտանգության խնդրի առջև կանգնած մի երկրի համար:

Ստեղծված իրականության մեջ ներդրուների ծավալների շարունակական անկումը լրջագույն հիմնախնդիր է: Սակայն, տնտեսական զարգացման գործընթացում ռազմավարական նշանակություն ունեն ոչ միայն ներդրումների ծավալները, այլև ավելի կարևոր, քան ծավալներն են, ներդրումների ոլորտները, ներդրումներ իրականացնող երկրներն ու ընկերությունները: Վերջին այս խնդիրների լուծումներից կախված է ազգային տնտեսության գործառութային կառուցվածքի, տնտեսական կախվածության, սուվերենության, անվտանգության առանձնահատկությունները, տնտեսության զարգացման հեռանկարներն ու միտումները: Ներդրումների ուղղություններից, ձևերից, ներդնող երկրների աշխարհաքաղաքական շահերից, հավակնություններից կախված են ազգային տնտեսությունների դրական՝ կառուցողական կամ բացասական՝ ապակառուցողական դրսևորումները:

Ներդրումների ռազմավարական այս հարցերում ևս, ինչպես վկայում է վիճակագրությունը, Հայաստանը որդեգրել է, մեղմ ասած, ռիսկային և ապակառուցողական քաղաքականություն:



Նկ. 1: Տնտեսական աճի շարժընթացը ՀՀ-ում (%) [2]:



Նկ. 2: ՀՀ օտարերկրյա ուղղակի ներդրումների շարժընթացը, մլրդ դոլար [3]:



Նկ. 3: Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը և արտահոսքը (տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ) [4]:

Այսպես, անկախացումից ի վեր ՀՀ-ում ներդրումների ներհոսքերը հիմնականում ուղղվել են ֆինանսական միջնորդության (ողջ ներդրումների 28,7%), հանքարդյունաբերության և հիմնային մետաղների արտադրության (9.1%), էլեկտրականության և գազամատակարարման (9,1%), հեռահաղորդակցության (3,3%), խմիչքի արտադրության (1,5%), անշարժ գույքի (3,4%), ցամաքային (1,3%) և օդային տրանսպորտի (1,4%) ոլորտներին: Այս ոլորտներին բաժին է ընկնում ողջ ներդրումների 58,3%-ը, օտարերկրյա ուղղակի ներդրումների 90,1%-ը: Ներդրումներն աննշան են եղել վերամշակող արդյունաբերության մյուս բոլոր ճյուղերում (նկ. 4): Նման ներդրումային հոսքերի ուղղվածության

պայմաններում Հայաստանը ձեռք է բերել հումքային ուղղվածություն ու ձևավորել տնտեսության անհեռանկարային կառուցվածք:



Նկ. 4: Օտարերկրյա ներդրումների կառուցվածքն ըստ ոլորտների, Մաքուր պաշարները 2019 թ. դեկտեմբերի վերջին, մլրդ դրամ [6]: Մաքուր պաշարներն ընդգրկում են 1988 թ. մինչև 2019 թ. դեկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում ինչպես գործառնության արդյունքում իրականացված ներդրումների ծավալների հանրագումարը, այնպես էլ պարտավորությունների գծով մարումները, գների, փոխարժեքի և այլ փոփոխությունների՝ արտակարգ իրավիճակների, մեխանիկական սխալի և կազմակերպության ուղղակի լուծարման արդյունքում իրականացված փոփոխությունները:

Ինչ վերաբերում է Հայաստանում օտարերկրյա ներդրումների ծավալով առաջատար երկրներին, ապա առանձնանում են Ռուսաստանը (ներդրումների 16,6%-ը, օտարերկրյա ուղղակի ներդրումների՝ 38,2%-ը)՝ առաջանցիկ գերակայությամբ, Կիպրոսը (համապատասխանաբար 3,9%, 9%) Միացյալ Թագավորությունը (3,2%, 7,9%), Ջերսին (2,3%, 6,6%), Նիդերլանդները (3,1%, 5,3%), Միացյալ Նահանգները (2,2%, 3,9%), Արգենտինան (2,0%, 4,4%), Ֆրանսիան, Լիբանանը, Գերմանիան, Լյուքսեմբուրգը, միջազգային մի շարք կազմակերպութիւններ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը: Մյուս երկրների ներդրումներն ազդեցիկ չեն (նկ. 5): Ներդրումներն առանձնանում են խիստ կենտրոնացվածությամբ: Առաջատար տաս երկրներին բաժին է ընկնում ողջ ներդրումների 42,1%-ը, օտարերկրյա ուղղակի ներդրումներիր՝ 82,1%-ը, որից միայն Ռուսաստանին՝ համապատասխանաբար՝ 16,6% և 38,2%:

Խնդիրն ավելի մտահոգիչ է նաև այն պատճառով, որ ՀՀ ռազմավարական նշանակության ենթակառուցվածքներն՝ էլեկտրականությունը, գազամատակարարումը, հեռահաղորդակցությունը, օդային և երկաթուղային տրանսպորտը, ինչպես նաև ռազմավարական նշանակության հանքավայրերը, բաժնետոմսերի գերակշիռ մեծամասնությամբ, որոշ ոլորտներում նույնիսկ մինչև 100% սեփականութամբ, պատկանում են օտարերկրյա ներդրողներին ու

խոշոր ընկերություններին: Սովորաբար, երկրների մեծամասնությունն ազգային անվտանգության տրամաբանությունից ելնելով, շատ զգուշորեն է մոտենում այս հարցերին. մշակում չափորոշիչներ ու ռազմավարություն, և դրանց համապատասխան սահմանափակում կամ արգելում ռազմավարական ոլորտներում ու մրցակից կամ թշնամի երկրների կողմից բաժնետոմսերի ձեռք բերման հնարավորությունները: Այնինչ, Հայաստանը բաց քաղաքականության արդյունքում երկարաժամկետ պարտավորություններով սահմանափակել է իր տնտեսական ու քաղաքական ինքնիշխանությունը:



Նկ. 5: Օտարերկրյա ներդրումների կառուցվածքն ըստ երկրների, Մաքուր պաշարները 2019 թ. դեկտեմբերի վերջին, մլրդ դրամ [6]:

Հայտնի, որ տնտեսական աճը կախված է տնտեսական ակտիվությունից, այդ թվում ներդրումներից, իսկ տնտեսական ակտիվությունը՝ տնտեսական (ներդրումային) միջավայրի նպաստավորությունից և ներդրումային ռիսկերի արդյունավետ, համակողմանի, ինստիտուցիոնալ, իրավական կառավարումից: Իրականությունն այնպիսին է, որ ՀՀ-ում ներդրողները, լինեն օտարերկրյա թե ներքին, հանդես են բերում զգուշավորություն՝ անորոշ ռիսկերի և ոչ բարենպաստ ներդրումային միջավայրի առկայության պատճառով:

Տարիներ շարունակ քննարկվում և միջոցներ են ձեռնարկվում ներդրումային միջավարի բարելավման ուղղությամբ, սակայն իրավիճակի դրական փոփոխություններ չեն արձանագրվում, եթե չխոսենք իրավիճակի ավելի վատթարացման մասին:

Ըստ մեր դիտարկումների՝ հիմնախնդիրը շարունակում է լուծում չգտնել երկու առանցքային նախապատճառների արդյունքում:

Առաջինը՝ երկրների *քաղաքական և տնտեսական ինստիտուտների բնույթն* է և հանդես է գալիս որպես ներքին գործոն:

«Այս կամ այն երկրի տնտեսական հաջողությունը կախված է ինստիտուտներից՝*օրենքներից*, որոնցով աշխատում է նրա տնտեսությունը, և *խթաններից*, որոնք ստանում են նրա քաղաքացիները» [7], այսպես է բնորոշում տնտեսական ակտիվության նախապայմանները հայկական ծագմամբ Թուրքիայում ծնված ամերիկացի տնտեսագետ Տարոն Աճեմօղլին:

Նա տարբերակում է տնտեսական ինստիտուտների երկու տեսակ՝ ինկլյուզիվ և էքստրակտիվ [7]:

Զարգացած երկրներին բնորոշ են ինկլյուզիվ տնտեսական ինստիտուտները, որոնց կարևոր և պարտադիր բաղադրիչներն են մասնավոր սեփականության պաշտպանված իրավունքները, արդարադատության անկողմնակալ համակարգը և տնտեսական ակտիվությանը բոլոր քաղաքացիների, այլ ոչ միայն էլիտայի, մասնակցության հավասար հնարավորությունները: Ինկլյուզիվ ինստիտուտները նպաստում են տնտեսական աճին, աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և բարգավաճմանը [7]:

Զարգացող երկրներին բնորոշ են էքստրակտիվ տնտեսական ինստիտուտները, որոնք ուղղված են հասարակության մի փոքր հատվածի՝ էլիտայի շահերի պաշպանությանը և հարստացմանը, ի հաշիվ հասարակության մյուս՝ մեծամասնություն կազմող հատվածի ակտիվ շահագործման: Էքստրակտիվ ինստիտուտները նպաստում են տնտեսական լճացմանը, հասարակության սոցիալական բևեռացմանը:

Թե ինչպիսի տնտեսական ինստիտուտներ կձևավորվեն և տնտեսական ակտիվության ու ներդրումների համար ինչպիսի նախապայմաններ կստեղծվեն որոշում են քաղաքական ինստիտուտները:

Էքստրակտիվ քաղաքական ինստիտուտները կենտրոնացնում են իշխանությունն էլիտայի ձեռքին և նրան ընձեռնում անսահմանափակ իշխանություն: Իր հերթին իշխող էլիտան ձևավորում է էքստրակտիվ տնտեսական ինստիտուտներ, որոնք պաշտպանում են բացառապես վերջիններիս շահերը, նրանց տալիս տնտեսական ակտիության լայն հնարավորություններ և արգելում կամ սահմանափակում տնտեսական դաշտում այլ խաղացողների հանդես գալուն: Էքստրակտիվ տնտեսական ինստիտուտները նպաստում են էլիտայի հարստացմանը, որի արդունքում ձեռք բերված ընդլայնված հնարավորություններն ուղղվում են քաղաքական գերիշխանության պահպանմանը:

Ի դեպ, երբ իշխանությանը տեր են դառնում նոր քաղաքական ուժեր, սովորաբար նրանք ժառանգում են անսահմանափակ իշխանություն և գործընթացը կրկնվում է:

Ինկլյուզիվ քաղաքական ինստիտուտների դեպքում իշխանությունը բաշխվում է մարդկանց և գերատեսչությունների լայն շրջանակների միջև: Համակարգը բարդացնում է քաղաքական որևէ էլիտայի իշխանության կցումը և դրանով իսկ սահմանափակում իշխանության կամայական կիրառումը: Ինկլյուզիվ քաղաքական ինստիտուտները ստեղծում են ինկլյուզիվ տնտեսական ինստիտուտներ, որոնք բաշխում են եկամուտները մարդկանց առավել լայն շրջանների միջև և դրանով իսկ ապահովում ինկլյուզիվ քաղաքական ինստիտուտների կայունություն:

Ըստ էության, ինկլյուզիվ քաղաքական ինստիտուտները ստեղծում են ինկլյուզիվ տնտեսական ինստիտուտներ և հակառակը, իսկ էքստրակտիվ քաղաքական ինստիտուտները ստեղծում են էքստրակտիվ տնտեսական ինստիտուտներ և հակառակը: Ստեղծվում են իրենք իրենց վերարտադրող

«փակ շրջաններ», որոնք առանձնանում են բավականին կայունությամբ ու պահպանողականությամբ: Եթե ինչ-որ կերպ այս համակարգերից որևէ մեկում հայտնվում է այլատիպ ինստիտուտ, ապա այն կամ հանգեցնում է մյուս ինստիտուտների նույնականացմանը, կամ, հակառակը, շուտով վերստին վերափոխվում է նախկինին:

Էքստրակտիվ ինստիտուտները սահմանափակում կամ խոչընդոտում են տնտեսական ակտիվությանը և աճին: Սրանց հիմքում ընկած է առավելապես էքստենսիվ տնտեսական աճը, որն ապահովվում է արտադրության գործոնների՝ աշխատանքի, կապիտալի, ռեսուրսների, հողի քանակական կամ ծավալային ավելացման հաշվին և տեղի է ունենում առավելապես նախկին տեխնոլոգիական հիմքի վրա: Էքստրակտիվ ինստիտուտների դեպքում տնտեսական առաջընթացն ուղեկցվում է հումքային մասնագիտացմամբ: Ունի զարգացման ներքին հնարավորության սահմանային սահմանափակում: Տնտեսական աճը շատ խոցելի է և անկայուն: Համակարգին մշտապես ուղեկցում են սոցիալական բևեռացման արդյունքում ծնվող կոնֆլիկտները:

Ինկլյուզիվ ինստիտուտները նպաստում են տնտեսական աճին: Սրանց հիմքում ընկած է առավելապես ինտենսիվ տնտեսական աճը, որն տեղի է ունենում արտադրության գործոնների որակական հատկանիշների բարձրացման, տեխնոլոգիական գործընթացների կատարելագործման, նորամուծությունների ներդրման, արտադրողականության բարձրացման ու արտադրության կազմակերպման ձևերի ու մեթոդների կատարելագործման շնորհիվ: Տնտեսական ակտիվության և զարգացման հիմքում ընկած են տեխնոլոգիական առաջընթացն ու նորամուծությունները, սիներգիան և կլաստերացման արդյունքը: Ինկլյուզիվ ինստիտուտների դեպքում տնտեսական առաջընթացն ուղեկցվում է, ինչպես տնտեսագետ Ջոզեֆ Շումպետերն է անվանում, «ստեղծագործ կործանմամբ»՝ «հին» արտադրությունների և այդ ոլորտներում առաջատար ազդեցիկ ուժերի պարտությամբ ու «նորերի» ձևավորմամբ: Ըստ էության, ինկլյուզիվ ինստիտուտները և նրա կողմից խթանվող տնտեսական աճը ծնում են նոր հաղթողներ և պարտվողներ, որի արդյունքում և՛ տնտեսական, և՛ քաղաքական դաշտում ի հայտ են գալիս նոր ազդեցիկ խաղացողներ:

Էքստրակտիվ ինստիտուտների դեպքում տնտեսական և քաղաքական ազդեցիկ խաղացողները հաճախ ընդդիմանում են տնտեսական տեխնոլոգիական և նորարական առաջընթացին, քանի որ «ստեղծագործ կործանման» գործընթացի արդյունքում մրցակցության դաշտում կհայտնվեն նոր խաղացողներ ու դրանով իսկ կխաթարվեն իրենց գերակայության հիմքերը: Նրանք վախենում են տնտեսական զարգացման նորարական պաքարում պարտվել և կորցնել այն արտոնությունները, որոնց վրա հիմնված է իրենց հարստությունն ու ուժը:

Այսինքն՝ տնտեսական ակտիվության և ներդրումային դաշտի բարելավման ներքին խոչընդոտն էքստրակտիվ քաղաքական ինստիտուտներ են շահագրգիր էլիտայի շահերի, գերիշխանության ու մենաշնորհության պաշտպանմամբ:

Քանի որ և՛ էքստրակտիվ, և՛ ինկլյուզիվ քաղաքական ու տնտեսական ինստիտուտները սովորաբար փակ, իրենք իրենց վերարտադրող համակարգեր են, դրանց փոփոխման կամ, այսպես կոչված, քանդման համար անհրաժեշտ են «բեկման կետեր»՝ կարևոր իրադարձություններ կամ իրադարձությունների զուգադիպումներ: Բեկման կետերն ուժեղ հարվածներ են, որոնք ընդունակ են

երկրների զարգացման ուղեծիրը փոխել տարբեր ուղղություններով: Եվ, ինչպես վկայում է պատմական փորձը, պարտադիր չէ, որ բեկման կետը լինի քաղաքական հեղափոխությունը:

Տնտեսական ակտիվության և ներդրումների վրա ազդող առանցքային նախապայմաններից երկրորդը՝ *գեոէկոնոմիկական շարժառիթներն ու գործող մեխանիզմներն են*: Սա արտաքին գործոնն է, գուցե ավելի ազդեցիկ, քան ներքինը:

Եթե մինչև համաշխարհային տնտեսության զարգացումը երկրների առաջատարության մրցապայքարը տեղի էր ունենում աշխարհաքաղաքական-ուժային մեթոդներով աշխարհագրական տարածքում, այսօր առաջատարության մրցապայքարն առավելապես ընթանում է աշխարհատնտեսական մեթոդներով տնտեսական տարածքում: Քաղաքագետ Էդվարդ Լյութթվակի բնորոշմամբ աշխարհաքաղաքականության՝ գեոպոլիտիկայի դարաշրջանից անցում է կատարվել աշխարհատնտեսական՝ գեոէկոնոմիկայի դարաշրջանի: Ըստ նրա՝ գեոէկոնոմիկական պայքարում «*արդյունաբերության համար ներդրումային կապիտալը*՝ պետության կողմից տրամադրվող կամ խրախուսվող, համարժեք է զինված ուժերին. *նոր արտադրության զարգացումը*՝ պետության կողմից սուբսիդավորվող, համարժեք է նոր զենքի ստեղծմանը. *օտարերկրյա շուկաներ ներթափանցումը*՝ պետության կողմից աջակցվող, փոխարինում է արտասահմանում ռազմական բազաների ստեղծմանը, ինչպես նաև դիվանագիտական ազդեցությանը» [8]:

Աշխարհատնտեսական մրցապայքարի այս նոր պայմաններում գլխավոր դերակատարներն են միջազգային կառույցները և աշխարհանտեսական խոշոր խաղացողները: Նրանք էլ սահմանում են մրցապայքարի «խաղի կանոնները»՝ հիմքում դնելով սեփական շահերը, և իրենց կամքն ու որոշումները պարտադրում տնտեսապես թույլ երկրներին՝ հաճախ ի վնաս և ի հաշիվ վերջիններիս տնտեսական զարգացման:

Առաջատարության և հարստացման մրցապայքարի պատմականորեն ձևավորված երկու եղանակ կա: Առաջինն՝ «խաղն է զրոյական գումարով», որի էությունն ուրիշի հարստության սեփականացումն է՝ գրավումը: Հարստացման այս եղանակն արդիական էր հատկապես հին աշխարհին: Ինչպես անգլիացի քաղաքական գործիչ Թոմաս Բրաունն (1605–1682 թթ.) էր արտահայտվում. «Բոլորը միաժամանակ չեն կարող լինել երջանիկ, քանի որ մեկ երկրի փառքը կառուցվում է մյուսի ավերակների վրա» [5]:

Առաջատարության և հարստացման երկրորդ եղանակը՝ արարումն է, բարիքի ստեղծումը: Այսպես ձևավորվում է տնտեսական աճ հասկացությունը՝ որպես սիներգիայի, աշխատանքի բաժանման, արտադրության դիվերսիֆիկացման, աճող վերադարձելիությամբ գործունեության տեսակների և նորամուծությունների և տեխնոլոգիական առաջընթացի արդյունք: Էքստենսիվ աճին՝ սահմանային հնարավորություններով, փոխարինելու է գալիս ինտենսիվ աճը:

Ներկա աշխարհատնտեսական դարաշրջանում առաջատարության մրցապայքարում առաջատար երկրներն իրենց դիրքերը պահպանելու ու ավելի զարգանալու համար կիրառում են երկու եղանակն էլ, սակայն ժամանակակից քաղաքակիրթ գործիքակազմով: Առաջին եղանակի դեպքում ընթանում է տնտեսական նեոգաղութացում: Երկրորդ եղանակի դեպքում՝ նորարարությունների մրցավազք:

Առաջին եղանակի դեպքում ներկայիս առաջատար դերակատարները ջանք ու միջոցներ չեն խնայում երրորդ երկրները տնտեսապես կախյալ երկրների և հումքային մատակարարների վերածելու, իրենց ազդեցության գոտում ներառելու համար: Նրանք բոլորովին շահագրգռված չեն վերջիններիս տնտեսական ինքնիշխանության ամրապնդման ու արագընթաց զարգացման հարցում, քանի որ մի կողմից առաջատարության մրցակցության խաղադաշտում ի հայտ կգան նոր մրցակից-խաղացողներ ու կստեղծվեն ոչ ցանկալի այլընտրանքային հաղթանակի հնարավորություններ, մյուս կողմից կթուլանան նրանց գերակայության և մենաշնորհության դիրքերը. իրենց տնտեսական զարգացման համար նպաստավոր խաղի պայմանների պարտադրման ու թելադրման հնարավորությունները:

Հարստացման երկրորդ եղանակն ընդգրկում է նաև տեխնոլոգիական առաջընթացը, նորամուծություններն ու սիներգիան, ինչն առավելապես հասու է զարգացած երկրներին: Նորամուծությունները, շատ քիչ բացառություններով, առաջատար երկրների մենաշնորհներն են, քանի որ դրանց ստեղծման համար պահանջվող որակյալ կադրեր, և նաև գիտահետազոտական, գիտաարտադրական, ֆինանսական հնարավորություններ ունեն միայն նման երկրները: Զարգացող երկրներում նոր արտադրությունները ստեղծվում են գլխավորապես զարգացած երկրներում արդեն իրենց «սպառած» արտադրութունների և տեխնոլոգիական նորամուծությունների ներդրման արդյունքում՝ «հին արտադրությունների դիֆուզիայի» օրենքին համապատասխան, որոնք իհարկե չունեն զարգացման արդյունավետության այն ծավալները, ինչ նորագույնը:

Իրենց անվերապահ առաջատարությունը պահպանելու համար աշխարհատնտեսական էլիտան կիրառում է մի շարք քաղաքակիրթ ու առաջին հայացքից անվնաս կամ դրական թվացյալ գործիքակազմ, որոնք սակայն գործում են ի շահ առաջատարների: Այդպիսիք են, օրինակ՝

- գիտատեղեկատվական դաշտում, ինչպես Տորստեյն Վեբլեն է անվանում, «բնազդների բթացումը»;
- երրորդ երկրներում առանց մաքսային պաշտպանության ազատ շուկայի՝ որպես զարգացման լավագույն և միակ ուղղու ձևավորումը;
- բացառապես որոշակի ոլորտների, հատկապես փակուղային կամ նվազող վերադարձելիություն ունեցող հումքային գործունեության տեսակների օժանդակությունը;
- աճող վերադարձելիություն ունեցող և տնտեսական զարգացմանը խթանող գործունեության տեսակների զարգացման խոչընդոտումը;
- ռազմավարական նշանակության օբյեկների և ենթակառուցվածների մեծամասնական կամ բացարձակ սեփականաշնորհման արդյունքում երկրների սուվերենության սահմանափակումը;
- բարեգործական և վարկային քաղաքականության արդյունքում զարգացող երկրների վերահսկողության և կախվածության հաստատումը;
- ինտեգրացիոն միություններում ներառումը և անդամ զարգացած երկրների շահերին համապատասխանեցված խաղի կանոնների պարտադրումը և այլն:

Իրականությունն այսօր այն է, որ քաղաքակրթության ողջ պատմության ընթացքում երկրների միջև զարգացման բևեռացումը նման ծավալներ երբևէ չի ունեցել: Հարուստ երկրները շարունակում են արագընթաց տեմպերով հարստանալ, իսկ աղքատ երկրները՝ մնալ աղքատ:

Կարելի է ասել, մեգամակարդակում զարգացած երկրները ձևավորում են նմանատիպ էքստրակտիվ տնտեսական ինստիտուտներ ու խաղի կանոններ՝ իրենց էլիտա-երկրների շահերը պաշտպանելու, հարստանալու և գերիշխանությունը պահպանելու համար, դրանով իսկ սահմանափակելով երրորդ երկրների տնտեսական զարգացման հավասարազոր պայմանները:

Եզրակացություն: Այսպիսով, ելնելով ՀՀ ներդրումների իրավիճակային առանձնահատկություններից, եզրակացնում ենք.

➢ ՀՀ ներդրումային իրականությունը, հեռանկարային ու կառուցողական չէ.

- Ճարունակաբար նվազում են ներդրումների ծավալներն, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները 2008 թ. Համեմատությամբ նվազել են շուրջ 3,7 անգամ;
- Նվազում է ներդրումների %-ը ՀՆԱ-ի նկատմամբ, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներինը 2008 թ. Համեմատությամբ շուրջ 4,5 անգամ;
- ՀՀ-ում ներդրումային ներհոսքերը հիմնականում ուղղվել են ֆինանսական միջնորդության, հանքարդյունաբերության և հիմնային մետաղների արտադրություն, էլեկտրականության և գազամատակարարման ոլորտներ: Այս ոլորտներին է բաժին ընկել ողջ ներդրումների շուրջ 47%-ը, օտարերկրյա ուղղակի ներդրումների 63%-ը;
- Ներդրումներ իրականացնող առաջատար հինգ երկրներին բաժին է ընկնում ողջ ներդրումների 67%-ը, օտարերկրյա ուղղակի ներդրումների՝ 29%-ը:

➢ ՀՀ ներդրումային միջավայրի բարելավման ու ներդրումային ռիսկերի արդյունավետ կառավարման ձախողումները քաղաքական ու տնտեսական էքստրակտիվ ինստիտուտների արդյունք են: Առաջատարության և գերիշխանության մրցապայքարում, ինչպես մեգա- և մակրոմակարդակներում, այնպես էլ մեզո- և միկրոմակարդակներում, գործում են էքստրակտիվ օրենքներ՝ «խաղի կանոններ», որոնք պաշտպանում են առաջինի դեպքում՝ առաջատար երկրներների, երկրորդի դեպքում՝ երկրի ներքին քաղաքական և տնտեսական էլիտայի շահերը:

Առաջարկվում է.

➢ ներդրումային դաշտի բարելավման և ներդրումային ռիսկերի արդյունավետ կառավարման գործընթացում կարևորել աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական գործոնները, ընդ որում, բոլոր մակարդակներում;

➢ նպաստել երկրում տնտեսական և քաղաքական ինկլյուզիվ ինստիտուտների ձևավորմանը;

➢ ներդրումային բարեփոխումներն իրականացնել տնտեսական արդյունավետության և ոչ թե էլիտայի սուբյեկտիվ շահերի նկատառումներից ելնելով:

Այսպիսով, տնտեսական, այդ թվում ներդրումային արդյունավետության համար անհրաժեշտ է հետևել տնտեսական զարգացման էմուլյացիայի օրենքներին, վերապահումով մոտենալ բաց շուկայական հարաբերություններին, իրականացնել նորաստեղծ և հատկապես նորագույն (աճող վերադարձելիությամբ և ոչ կայացած շուկայով) արտադրությունների հովանավորչական քաղաքականություն, կողմնորոշվել ոչ թե սուբյեկտիվ՝ էլիտայի շահերի, այլ

օբյեկտիվ՝ երկրի տնտեսական արդյունավետության, տնտեսության ճյուղային կառուցվածքի բարեփոխման ու դիվերսիֆիկացման սկզբունքներով:

Ստացվել է՝ 15.03.2021
Գրախոսվել է՝ 31.03.2021
Հաստատվել է՝ 27.04.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://data.worldbank.org/indicator/SI.DST.10TH.10?contextual=income-distribution&locations=AM&view=chart
2. https://armstat.am/file/doc/99520978.pdf
3. https://data.worldbank.org/indicator/BM.KLT.DINV.CD.WD?end=2019&locations=AM&start=1998&view=chart, https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.CD.WD?locations=AM&view=chart
4. https://data.worldbank.org/indicator/BX.KLT.DINV.WD.GD.ZS?locations=AM&view=chart, https://data.worldbank.org/indicator/BM.KLT.DINV.WD.GD.ZS?locations=AM&view=chart
5. Reinert E.S. *How Rich Countries Got Rich… and Why Poor Countries Stay Poor*. London: Constable (2008), 398 p.
6. https://www.armstat.am/file/doc/99520978.pdf
7. Аджемоглу Д., Робинсон Д.А. *Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты.* М., АСТ (2015). http://www.litres.ru/pages/biblio_book/?art=10748980
8. Luttwak E. *Turbo-Capitalism. Winners and Losers in the Global Economy*. NY., Harper Perennial, (1999), 128–129.

Г. Г. ГАМБАРЯН

ИНВЕСТИЦИИ В ПРОЦЕССЕ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА

Резюме

Роль инвестиций в процессе экономического развития стран велика. Поэтому вопрос о привлечении инвестиций является делом государственной важности. Статья посвящена выяснению особенностей инвестиционных потоков Республики Армения, выявлению препятствующих факторов и, особенно, объяснению причин невоплощения в жизнь процессов улучшения инвестиционного потока и инвестиционного поля.

G. G. GHAMBARYAN

INVESTMENTS IN THE PROCESS OF ECONOMIC DEVELOPMENT OF RA

Summary

The role of investment in the process of economic development of countries is great. Therefore, the issue of attracting investment is a matter of national importance. The article is devoted to clarifying the features of the investment flows of the Republic of Armenia, identifying the obstacles and, especially, explaining the reasons for not implementing the processes of improving the investment flow and the investment field.